ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ COP17-Կ-26/01

ք.Երևան «25»«05» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Ստացող»), և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս Հայկ Սիմոնյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գործակալ»), մի կողմից, «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Նելլի Մալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կապալառու»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Հավելված №1-ով և օրացուցային գրաֆիկով՝ Հավելված №3-ով սահմանված, նախագծանախահաշվային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), Գործակալը պարտավորվում է վարձատրությամբ, Ստացողի անունից և հաշվին կատարել Պայմանագրով նախատեսված գործողությունները (Հավելված 3.1), իսկ Ստացողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով ընդունել կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները և վարձատրել դրանց համար: Պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում Ստացողի կողմից տրամադրված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը: Պայմանագիրը հանդիսանում է կապալի աշխատանքների կատարման և գործակալության խառը պայմանագիր:

1.2. Կողմերն ընդունում և հաստատում են, որ գործակալության մասով Պայմանագիրը կնքվում է ի կատարումն Ստացողի և Գործակալի միջև 23.02.2026 թվականին կնքված «Պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագիր» N ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի և հանդիսանում է նշված պայմանագրով նախատեսված փուլային համաձայնագիր:

1.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան, որը հաստատում է Ստացողը՝ Կապալառուի կողմից դրանք ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Կապալառուն, նշված փաստաթղթերը մինչև Ստացողին ներկայացնելը, ստանում է նաև Գործակալի դրական եզրակացությունը՝ փաստաթղթերը COP17 միջացառման իրականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ:

1.4. Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները ծագում են Պայմանագրի գնին համապատասխան ֆինանսական միջոցները Ստացողի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան Գործակալի բանկային հաշվին փոխանցելու դեպքում: Ֆինանսական միջոցներն ապահովված լինելու դեպքում Գործակալը այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Կապալառուին՝ Ստացողից գրավոր ծանուցում ստանալուց հետո: Որպես աշխատանքների կատարման մեկնարկի օր համարվում է Գործակալի կողմից Կապալառուին տեղեկացնելու և 3.2.2 կետի երկրորդ նախադասությամբ նախատեսված կանխավճարը Կապաառուի բանկային հաշվին փոխանցելու օրվան հաջորդող օրը և պետք է ավարտվի մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ, իսկ մինչև սույն թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ Կապալառուն պարտավորվում է սպասարկել աշխատանքների արդյունքը: Ընդ որում, եթե ֆինանսական միջոցներն ապահովվում են Պայմանագրի Հավելված №3-ում ներկայացված օրացուցային գրաֆիկում նշված ժամկետից ուշ, ապա սույն կետում նշված ժամկետները համապատասխանաբար երկարաձգվում են:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են Պայմանագրի Հավելված №3-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, նյութերով (բացառությամբ Ստացողի տրամադրած նյութերի) և միջոցներով:

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ստացողն իրավունք ունի՝

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2. Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3. Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5. Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6. Մինչև Ստացողի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.1.7. Կապալառուից պահանջել իրեն հանձնելու Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված գույքը (հիմնական միջոցները) և արագամաշ առարկաները:

3.2. Ստացողը պարտավոր է՝

3.2.1. Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Գործակալին և Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2. Պայմանագիրը ստորագրելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Գործակալի բանկային հաշվին փոխանցել Պայմանագրի գնի 90 (իննսուն) տոկոսը: Նշված գումարից Կապալառուի աշխատանքների դիմաց վճարվելիք գումարի 50 (հիսուն) տոկոսը հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գործակալը փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար:

3.2.3. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.4. Գործակալին վճարել Պայմանագրով նախատեսված վարձատրությունը:

3.2.5. Պայմանագրով նախատեսված աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Գործակալին գրավոր հանձնարարել այդ նպատակի համար հատկացված միջոցներից վճարել Կապալառուին վճարման ենթակա գումարները՝ հանձնարարությանը կցելով ստորագրված հանձնման-ընդունման ակտի պատճեն և ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:

3.2.6. Կապալառուից ընդունել Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված գույքը (հիմնական միջոցները) և արագամաշ առարկաները:

3.3. Գործակալը պարտավոր է՝

3.3.1. Պայմանագրով նախատեսված դեպքերում, կարգով և ժամկետում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3.2. Ստացողի հանձնարարությունների շրջանակներում և Պայմանագրի կատարման ընթացքում՝ գործել Ստացողի լավագույն շահերից ելնելով:

3.3.3. Ստացողի պահանջով կամ ըստ անհրաժեշտության ներկայացնել Կապալառուի կողմից աշխատանքների կատարման ընթացքի և նրա կողմից ժամկետների պահպանման վերաբերյալ տեղեկություններ:

3.3.4. Հետևել Պայմանագրի Հավելված 3-ով հաստատված օրացուցային գրաֆիկի աշխատանքների կատարման ընթացքին և աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին ու տալ ողջամիտ ժամկետ և ցուցումներ՝ դրանց վերացման ուղղությամբ:

3.3.5. Ապահովել Պայմանագրի 4..1 կետով նախատեսված տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության հետ համապատասխան պայմանագրի կնքումը:

3.3.6. Նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշիվը, մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների մեկնարկը, համաձայնեցնել ՄԱԿ պատասխանատու պաշտոնատար անձի հետ:

3.4. Գործակալը իրավունք ունի՝

3.4.1. Պարբերաբար ուսումնասիրել աշխատանքի կատարման ընթացքը և ի հայտ եկած խնդիրները լուծելու նպատակով ձեռնարկել միջոցներ:

3.4.2. Պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին ու տալ ողջամիտ ժամկետ և ցուցումներ՝ դրանց վերացման ուղղությամբ:

3.4.3. Ստացողի հանձնարարությամբ և գիտությամբ, նրա անունից երրորդ անձանց հետ կնքել պայմանագրեր, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի առարկայի շրջանակներում Ստացողի հանձնարարությունների կամ Պայմանագրի կատարման համար:

3.4.4. Ստացողից պահանջել վճարել Պայմանագրով նախատեսված Գործակալի վարձատրության գումարը:

3.4.5. Կապալառուից պահանջել Պայմանագրով սահմանված ժամկետներում ներկայացնել գրավոր հաշվետվություններ՝ կատարողականի հիմնական ցուցանիշների և կատարված աշխատանքների վերաբերյալ:

3.5. Կապալառուն իրավունք ունի՝

3.5.1. Պայմանագրով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը Ստացողի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.5.2. Պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Գործակալից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, եթե վճարման ենթակա գումարի 100 (հարյուր) տոկոսը (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, Ստացողի նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները, եթե այդպիսիք հաշվարկվել են) Ստացողը, Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցել է Գործակալին և գրավոր հանձնարարել է վճարել Կապալառուին: Եթե Ստացողը չի կատարել Պայմանագրով նախատեսված պարտավորությունները և վճարման ենթակա գումարները չի փոխանցել Գործակալին կամ գրավոր չի հանձնարարել վճարել, ապա սույն կետում նախատեսված վճարման ենթակա գումարները Կապալառուն պահանջում է Ստացողից:

3.6. Կապալառուն պարտավոր է՝

3.6.1. Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3.6.2. Կատարել աշխատանքի վերաբերյալ Ստացողի կամ Գործակալի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.6.3. Չխոչընդոտել Գործակալի աշխատանքը՝ ուսումնասիրելու Կապալառուի կողմից աշխատանքների կատարման ընթացքը, աջակցել և Գործակալի հարցումների դեպքում ողջամիտ ժամկետում ներկայացնել իրական վիճակն արտահայտող տեղեկություններ:

3.6.4. Գործակալի բարձրացրած և ի հայտ եկած խնդիրները լուծելու նպատակով համագործակցել ու ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

3.6.5. Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը նախագծանախահաշվային փաստաթղթերի և Պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը):

3.6.6. Աշխատանքի արդյունքը Ստացողին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.6.7. Պայմանագրի 1.4 կետում նշված ժամկետը խախտելու և Ստացողի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.6.8. Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Ստացողին պատճառված իրական վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.6.9. Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.6.10. Եթե Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Ստացողի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.6.11. Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Ստացողի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Ստացողի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.6.12. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Ստացողին:

3.6.13. Պայմանագրի 1.4 կետում նշված ժակետների ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Գործակալին ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ կատարողականի հիմնական ցուցանիշների և կատարված աշխատանքների վերաբերյալ:

3.6.14. Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված գույքը (հիմնական միջոցները) և արագամաշ առարկաները հանձնել Ստացողին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կատարված աշխատանքը ընդունվում է Ստացողի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Ստացողին հանձնելու փաստը ֆիքսվում է Ստացողի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում, Պայմանագրի շրջանակներում կատարված և Ստացողին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որոնց վերաբերյալ առկա է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Ստացողին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Ստացողին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №4.1), և հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №4):

Պայմանագրի 3.2.2 կետում նշված գումարի մնացած մասից Կապալառուին վճարումներ կատարվում են, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, իսկ Ստացողը պայմանագրի սույն կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և Գործակալին գրավոր հանձնարարում է վճարել Կապալառուին վճարման ենթակա գումարները՝ հանձնարարությանը կցելով ստորագրված հանձնման-ընդունման ակտի պատճեն և ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր: Գործակալին Ստացողը հանձնարարում է վճարել Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկված և հաշվանցված գումարը, եթե Կապալառուի նկատմամբ կիրառվել են տույժ կամ տուգանք:

Պայմանագրի 3.2.2 կետով նախատեսված գումարի մարումը սահմանված կարգով իրականացնելուց և Կատարված աշխատանքի արդյունքը սահմանված կարգով ընդունելուց հետո, եթե Կապալառուն սահմանված ժամկետներում Գործակալին ներկայացրել է Պայմանագրի 3.6.13 կետով պահանջվող հաշվետվությունները, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի գնի 10 (տաս) տոկոսը Ստացողը փոխանցում է Գործակալի բանկային հաշվին և սույն կետում սահմանված կարգով հանձնարարում է վճարել Կապալառուին:

4.2. Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Ստացողը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.1 կետում նշված ժամկետում Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Ստացողը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3. Եթե պայմանագրի 4.1 կետով սահմանված ժամկետում Ստացողը չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.1 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Ստացողը Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.4. Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները Պայմանագրին չհամապատասխանելու դեպքում Ստացողը և Կապալառուն կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրի ընդհանուր գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է **103 572 460 (հարյուր երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր վաթսուն)** դրամ, որից՝

- Կապալառուի վարձատրությունը կազմում է **86 310 384 (ութսուն վեց միլիոն երեք հարյուր տասը հազար երեք հարյուր ութսունչորս)** ՀՀ դրամ, որը ներառում է ԱԱՀ-ն, հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները
- Գործակալի վարձատրությունը կազմում է Կապալառուի վարձատրության գումարի 20 (քսան) տոկոսը, որը կազմում է **17 262 076 (տասնյոթ միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար յոթանասունվեց)** ՀՀ դրամ, որը ներառում է տեխնիկական հսկողություն իրականացնող անձի վարձատրությունը, ԱԱՀ-ն, հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

5.2. Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Ստացողը՝ նվազեցնելու այդ գինը:

5.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ Պայմանագրով սահմանված կարգով դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ Հավելված №2-ով նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4. Պայմանագրի գնից Կապալառուին և Գործակալին Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով վճարումները կատարված են համարվում համամասնորեն՝ հաշվի առնելով Պայմանագրի գնի տոկոսային հարաբերակցությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և Պայմանագրի 1.4 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Ստացողի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Ստացողի կողմից Պայմանագրի դրույթներին համաձայն չընդունվելու դեպքում:

6.4. Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5. Ստացողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Ստացողի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1.

6.6. Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Ստացողը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Ստացողը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Ստացողի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Ստացողի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Ստացողի կամ Գործակալի) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Ստացողը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Ստացողն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10. Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Ստացողը

վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված №5) ստանալու դեպքում Ստացողը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Ստացողի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12. Պայմանագիրը կազմված է 7 (յոթը) էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Հավելված №№ 1-ը, 2-ը, 3-ը, 4-ը, 4.1-ը և 5-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՏԱՑՈՂ	***ԳՈՐԾԱԿԱԼ***	***ԿԱՊԱԼԱՌՈՒ***
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**	**«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Լեոյի 1	ՀՀ ք. Երևան, Ազատության պող, 24/1
ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ»	«Ամերիաբանկ»
ՀՀ 900011066439	ՀՀ 1660030207649200	ՀՀ 1570094422684200
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02893152	ՀՎՀՀ 00229394
Էլ.փոստ – minenv@env.am	Էլ.փոստ – support@dopingspace.com	Էլ.փոստ – kristine.sukiasyan@teamsystems.am
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	հիմնադիր տնօրեն	տնօրեն
Արկադի Խաչատրյան	***Հայկ Սիմոնյան***	***Նելլի Մայրան***
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	**Կ.S.**	**Կ.S.**

Հավելված №1
«25»«05» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ՍՏԱՑՈՂ		ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն		**«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ -ի**
գլխավոր քարտուղարի պ/կ		Տնօրեն
Արկադի Խաչատրյան		***Նելլի Մալյան***
(ստորագրություն)		(ստորագրություն)
Կ.Տ.		**Կ.Տ.**

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՏԵՍԱՀՍՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

(դրամ)

Հ/N	Ապրանքի/ծառայության անվանում	Մոդելը	Չ/Մ	Քանակ	Միավորի արժեք՝ ներառյալ ապրանք և տեղադրում	Ընդամենը արժեք
1	Տեսահսկամ համակարգի սերվեր միչև 1000 տեսախցիկ միացնելու հնարավորությամբ	Dahua DHI-DSS7116D	հատ	1	3 270 750	3 270 750
2	Կոշտ սկավառակ 16ՏԲ	Seagate 16TB ST	հատ	12	253 370	3 040 440
3	Գլանաձև IP տեսախցիկ արտաքին կիրառման 4 MP, 2.8 մմ ֆիքսված օբյեկտիվով	Dahua DH-IPC-HFW2449SP-S-IL-0280B	հատ	64	47 300	3 027 200
4	Տսախցիկի տուփ ամրակ	Dahua PFA130-E	հատ	64	7 040	450 560
5	Գմբեթաձև IP տեսախցիկ ներքին կիրառման կիրառման, 4 MP , IK 30 մ ,2.8 մմ ֆիքսված օբյեկտիվով	Dahua DH-IPC-HDBW2441EP-S-0280B	հատ	160	36 540	5 846 400
6	Գմբեթաձև PTZ IP տեսախցիկ արտաքին կիրառման 4MP, x32 optical zoom	Dahua SD5A432GB-HNR	հատ	6	284 480	1 706 880
7	Գմբեթաձև PTZ IP տեսախցիկի ամրակ		հատ	6	43 580	261 480
8	Ցանցային բաժանարար օպտիկական 24port	Huawei S310-24ST4X	հատ	1	227 220	227 220
9	Ցանցային բաժանարար 24 Poe մուտքերով	Huawei S220S-24LP4JX	հատ	16	122 540	1 960 640
10	SFP մոդուլ 1G single mode simplex	ATOP	զույգ	27	12 810	345 870
11	Ցանցային մալուխ U/UTP cat 5e	Siemon 9C5M4-E2-02	մ	14 950	450	6 727 500
12	Ցանցային կոմուտացիոն վահանակ 24 մուտք CAT 5e	Siemon (U5-K02NB) x24 + KPNL-F1-24-01Sx1	հատ	16	92 760	1 484 160
13	Կոմուտացիոն վահանակ 24 մուտք օպտիկա		հատ	1	83 580	83 580
14	Ցանցային բաժանարար 8 port Poe մուտքերով +1SFP	Dahua PFS3110-8ET-96	հատ	4	58 170	232 680
15	Արկղ արտաքին տեղակայման կիրառման		հատ	4	50 930	203 720

16	Ցանցային կարճ լար միացուցիչներով 2մ U/UTP cat 5 e	Siemon MC5-02M-0202	հատ	220	2 220	488 400
17	Մալուխների հորիզոնական ուղղորդիչ	Toten 981500118	հատ	18	3 950	71 100
18	Մալուխատար մետաղական 100x50 մմ		մ	3 000	3 240	9 720 000
19	100x50 մմ մալուխատարի եռաբաշխիչ դետալ		հատ	26	6 590	171 340
20	100x50 մմ մալուխատարի ուղիղ անկյուն դետալ		հատ	39	4 860	189 540
21	U պրոֆիլ		մ	1 000	3 590	3 590 000
22	Ձող 8մմ		մ	3 000	1 470	4 410 000
23	Ճոպան		մ	700	720	504 000
24	Ցանցային պահարան 42U, 800x1000	Toten GS.8042.9801	հատ	1	277 830	277 830
25	Ցանցային պահարան 15U, 600x590	Toten P2.6615.9001	հատ	15	83 790	1 256 850
26	Ցանցային պահարանի մեջ դրվող հոսանքի բաժանարար 6 տեղ	Toten PD06049000W	հատ	17	9 610	163 370
27	Օպերատորների աշխատանքային համակարգիչ	Համակարգչի իրան Case DeepCool MATREXX 30, Սնուցման բլոկ Power Supply 500W Xilence XN052, Պրոցեսոր CPU i5-14600K, Մայրական սալիկ Motherboard, sus Prime B660M-K D4, Հովացուցիչ Cooler DeepCool AG300, Հիշողության սարք Ram DDR4 16GB Kingston, Կոշտ սկավառակ SSD Kingston 240GB A400, Տեսաքարտ VGA GT730	հատ	3	451 500	1 354 500
28	Մոնիտոր 24 դույմ անկյունագծով	DHI-LM24-B201S	հատ	5	43 890	219 450
29	Վիդեոպատ 3x3 55 դույմ մոնիտորներով	Մոնիտոր Monitor Dahua DHI-LS550UCM-EF - 6x Հեռուստացույցի ամրակ - 6x Մալուխ HDMI Dahua W-HDMI10M - 8x Switch DHI-NVD0605DH-4I-4K - 1x	կ-տ	1	4 011 000	4 011 000
30	Ստեղնաշար KBD	Dahua DHI-NKB1000	հատ	1	60 060	60 060
31	Երկշերտ ճկախողովակ կարմիր (SN26) 50մմ		մ	1 500	1 500	2 250 000
32	Մալուխ ВВГ 2X2.5		մ	1 500	710	1 065 000
33	Օպտիկական մալուխ		մ	4 000	700	2 800 000
34	Բաշխիչ տուփ օպտիկական 16 ջիղ (մուֆտ)		հատ	25	35 700	892 500
35	Հոսանքի անխափան սնուցման աղբյուր 1500Վ/Ա		հատ	15	167 370	2 510 550
36	Հոսանքի անխափան սնուցման աղբյուր 6000Վ/Ա		հատ	1	798 000	798 000
37	Հավելյալ մոնտաժային նյութեր և աքսեսուարներ		լր	1	2 047 500	2 047 500
38	Ավտոաշտարակի վարձակալություն		լր	1	603 750	603 750
39	Համակարգի կարգաբերում և շահագործման հանձնում		լր	1	1 470 000	1 470 000
40	Տեխնիկակն աջակցություն (2 հոգի) 11-16 .11.2026		լր	1	661 500	661 500

41	Տեխնիկակն աջակցություն (2 հոգի) 17-31.11.2026		լր	1	1 470 000	1 470 000
42	Հենասյուն անհրաժեշտության դեպքում պատվիրատուի կողմից		-	-	-	-
43	Հողի փորման և ասֆալտի քանդման աշխատանքները պատվիրատուի կողմից		-	-	-	-
Ընդամենը՝ ՀՀ դրամ, առանց ԱԱՀ						**71 925 320**
20% ԱԱՀ						**14 385 064**
Ընդամենը՝ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ						**86 310 384**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Ոսկերիչների փող. 1 հասցեում:

Հավելված №2
«25»«05» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ՍՏԱՑՈՂ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն		**«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի**
գլխավոր քարտուղարի պ/կ	հրամանագրի տնօրեն	տնօրեն
Արկադի Խաչատրյան	***Հայկ Սիմոնյան***	***Նելլի Մայյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(դրամ)

Աշխատանքի														
h/h	անվանումը	**վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	Տեսահսման համակարգերի մոնտաժման և կարգաբերման աշխատանքներ, ներառյալ գործակալի վարձատրությունը	-	-	-	-	93 215 214	93 215 214	93 215 214	93 215 214	103 572 460	103 572 460	103 572 460	103 572 460	**103 572 460**

Հավելված №3
25»«05» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ՍՏԱՑՈՂ		ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**	**«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի**
գլխավոր քարտուղարի պ/կ	ինքնադիր-տնօրեն	տնօրեն
Արկադի Խաչատրյան	***Հայկ Սիմոնյան***	***Նելլի Մալյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**	**Կ.Տ.**

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՏԵՍԱՀՍՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Տեսահսման համակարգերի մոնտաժման և կարգաբերման աշխատանքներ**	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր**	31.08.2026 **թ.**

Հավելված №3.1
«25»«05» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ՍՏԱՅՈՂ	«Դոպինգ Սիստեմս» ՍՊԸ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն		«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի
գլխավոր քարտուղարի պ/կ	հիմնադիր-տնօրեն	տնօրեն
Արկադի Խաչատրյան	Հայկ Սիմոնյան	Նելլի Մալյան
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

ԳՈՐԾԱԿԱԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

N ը/կ	Գործակալի կողմից մատուցվելիք ծառայությունների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Տեսահսման համակարգերի մոնտաժման և կարգաբերման աշխատանքների ընթացիկ կազմակերպում, ապահովելով համագործակցություն տարածքի սեփականատիրոջ և Կապալառուի միջև	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր	31.08.2026 թ.
2.	Տեսահսման համակարգերի մոնտաժման և կարգաբերման աշխատանքների ընթացիկ հսկողություն,	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր	31.08.2026 թ.
3.	Տեսահսկման համակարգի և դրա բաղադրիչների պահպանության ապահովումը՝ կանխելով հնարավոր գողությունները, վնասումները	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր	31.10.2026թ.
4.	Պայմանագրային պարտականությունների պատշաճ ապահովման համար անհրաժեշտ անձնակազմի ներգրավում	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր	31.10.2026թ.
5.	Տեսահսման համակարգերի մոնտաժման ընթացքում ապահովում է տեխնիկական հսկողություն իրականացնող անձ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օր	31.08.2026 թ.

Հավելված №4
«___»«_____» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ՍՏԱՑՈՂ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Ազատության պող. 24/1
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 1570094422684200
ՀՎՀՀ 02507198	00229394

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2026 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Կապալային աշխատանքների կատարման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___»«_____» 2026 թ.
Պայմանագրի համարը՝ «COP17-Կ-26/01»
Ստացողը և Կապալառուն՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2026 թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

№	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №4.1
«___»«_____» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Ստացողին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ շրջակա միջավայրի նախարարությունը (այսուհետ՝ Ստացող) և «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև «___»«_____» 2026 թվականին կնքված № «COP17-Կ-26/01» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2026 թվականին հանձնման-ընդունման նպատակով Ստացողին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված №6
«___»«_____» 2026թ. կնքված
«COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ֆինանսական գործակալի անվանումը_____ հայտնում է, որ.

1. Շրջակա միջավայրի նախարարությունը, «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի և «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի միջև «___»«_____» 2026 թ. կնքված «COP17-Կ-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և «_____» ՍՊԸ-ի միջև «___» «_____» 2026 թ. կնքվել է «_____» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն է Պայմանագրի 8.10 կետով սահմանված պահանջներին:

_____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____
(ստորագրությունը)

Կ. Տ.

«___» «_____» 2026 թ.